# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Հ.Հ . Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի Բերքառատ բնակավայրի գերեզմանատների ցանկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը և մշակումը կատարվել է համայնքապետարանի պատվերի և նախագծման առաջադրանքի հիման վրա: Հաշվի է առնված նաև պատվիրատուի դիտողություններն ու առաջարկությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը , որ գերեզմանատների շուրջը բացակայում է ցանկապատ և այլ պաշտպանիչ կառույցներ անհրաժեշտություն է առաջացել ցանկապատել գերեզմանատների տարածքը: Տարածքը շրջափակվում է մետաղական ցանկապատով, երկու գերեզմանատան պարագծով, որոշակի տեղերում տեղադրելով դարպասներ և դռնակներ:

Նախագիծը կատարվել է ղեկավարվելով և հղում կատարելով ՀՀՇՆ 30-01-20-23 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 13-032022 «Կրող և պատող կոնստրուկցիաներ», ՀՀՇՆ 53-01-2020 «Պողպատե կոնստրուկցիաներ», ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» և ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» շինարարական նորմերին:

Ըստ չափաբաժնի Նախագիծն իր մեջ ընդգրկում է հետևյալ աշխատանքները:

1.Նախատեսվում է իրականացնել մետաղական ցանկապատի կառուցում 1683.0 մետր, իսկ դարպասներով և դռնակով 1693.0 գծմ:

2. Հողային աշխատանքներ

3 Ցանկապատի տեղադրում բետոնացումով:

Նախատեսվում է գերեզմանատան ցանկապատվող տեղամասի ամբողջ պարագծով համահարթեցնել բնահողի մակերևույթը 1693.0 մետր երկարության: Ցանկապատի կանգնակների համար ընտրվել է քառակուսի կտրվածքով մետաղական խողովակ 80x80x4 մմ որոնք բետոնացվում են 3.0մ երկարության թռիչքով և 400x400x900 մմ չափերով հիմքում: Ցանկապատի ամբողջ երկայնքով նախատեսվում է կառուցել խամքարաբետոնե գոտի որը տեղադրվում է 10սմ խորության հիմքում և ունի 30սմ լայնություն և 30սմ բարձրություն: Դարպասների կանգնակների համար ընտրվել է 140x140x4 մմ չափերի քառակուսի կտրվածքով մետաղական խողովակ, դարպասների առանցքային երկարությունը 4.0մ է: Դռնակների շրջանակների համար օգտագործվում է 50x50x2.5մմ չափերի քառակուսի կտրվածքով մետաղական խողովակ, որը մետաղական ծխնիներով միացվում է ցանկապատի և դարպասի կանգնակներին, նույն անալոգով դարպասի շրջանակը միացվում է դարպասի կանգնակներին:

Դարպասի բարձրությունը 0.00 նիշից 2.0մետր է , իսկ ցանկապատի բարձրությունը, ինչպես նաև դռնակի բարձրությունը 1.80մետր է: Բոլոր մետաղական խողովակները վերևի կողմից եռակցման միջոցով փակվել են մետաղե թերթով անձրևաջրերի ներթափանցումը կանխելու նպատակով: Շրջափակման համար ընտրվել է մետաղական ցանց Փ3մմ Bp 50x50մմ բնութագրով: Ցանցը վերևի կողմից և կողքերից շերտապողպատի օգնությամբ և եռակցման միջոցով ամրացվում է շրջանակին և կանգնակներին, իսկ ներքևից 15սմ խորասուզվում է բուտաբետոնե գոտու մեջ: Բետոնը B-12.5 դասի է: Բոլոր մետաղական կոնստրուկցիաները, բացի չժանգոտվող մետաղական ցանցից, ներկել երկշերտ յուղաներկով:

Նախագիծը մշակվել է Հ.Հ. գործող շինարարականորմաների և կանոների համաձայն:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| ՏՆՕՐԵՆ | Վ ՎԵՔԻԼՅԱՆ | | ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ, ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԵՐՔԱՌԱՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՑԱՆԿԱՊԱՏՈՒՄ | ընդ.տվյալներ ԳՀ, ՃՇ | | |
| ՆԱԽԱԳԾԵՑ | Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ | | | | | |
| ՍՏՈՒԳԵՑ | Ն. ՕՀԱՆՅԱՆ | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՎՅԱԼՆԵՐ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵՐԹԵՐ |
| ՍՏՈՒԳԵՑ | Գ. ԳՈՒԼԱՆՅԱՆ | | | ԱՆ | 2 | 6 |
| | | | ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | ՎԱՆԱՁՈՐԻ ՆԱԽԱԳԾՈՂ | | |